ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐԻ ԹԻՎ 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
2024-2029թթ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն_________________________________________________3
1.Հաստատության գործունեությունը________________________________7
2.Իրավիճակի վերլուծություն___________________________________14
2.1Ուսումնական հաստատության շենքային պայմանները______________14
2.2Ուսումնական հաստատության նյութատեխնիկական բազան
2.3Կառավարման մարմնի և տնօրենի համագործակցությունը__________26
2.4 Հաստատության համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմնի,ծնողական համայնքի,կրթության կառավարման մարմնի,շահառու կազմակերպությունների հետ___________________________________30
2. 5Մանկավարժական համակազմի մասնագիտական որակները_______40
2.6ՏՀՏ կրթական այլ տեխնոլոգիաները________________________________
2.7Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակը 50
2.8Բազմակարծիք,ներառական և մասնակցային միջավայր____________55
2.9Աշխատակազմի արժնորման խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծություն _____________________________60
2.10Ֆինանսատնտեսական գործունեությունը__________________________66
3.Զարգացման ծրագրի կատարման արդյունքների գնահատման չափանիշները_____________________________________________________70

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

‹‹ ՀՀ  Լոռու մարզի Տաշիր քաղաքի N 1 հիմնական դպրոց ›› ՊՈԱԿ-ի զարգացման 2024-2029 ծրագիրը մշակվել է ներառելով դպրոցում առկա հիմնախնդիրները և դրանց ուղղված հաջողությունների աստիճանական զարգացումը ։ Իմ նպատակն է՝ ծրագրում հստակ և իրատեսական ներկայացնել առկա իրավիճակը ,որի հիման վրա կազմելու եմ դպրոցի զարգացման ուղղությունները և դրանց ուղղված ռազմավարությունը ։ Դպրոցի գործունեության պլանավորումը ներկայացրել եմ ըստ փուլերի ու ոլորտների՝ հիմքում դնելով հանրակրթության պետական նոր չափորոշչի պահանջները: Մշակել եմ կատարման համար անհրաժեշտ գործողություններն ու միջոցառումները, սահմանել հիմնական ռազմավարություն, գնահատել եղած և անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական միջոցները:

Ծրագրի մշակման ընթացքում կազմակերպվել են կարիքների բացահայտման քննարկումներ, կազմվել են հարցաթերթիկներ, վեր են հանվել որակի կառավարմանը, մեթոդական գործիքակազմին, մշտադիտարկման և գնահատման մեխանիզմներին, ռիսկերի արդյունավետ գնահատմանը առնչվող խնդիրները, որի արդյունքում կատարվել են համալիր վերլուծություններ և առաջադրվել են հնարավոր լուծումներ և գործողություններ:

- Նպատակների և խնդիրների լուծման հիմքում դնել «Կրթության զարգացման պետական ծրագիրը»
- Հանրակրթության պետական նոր չափորոշչի պահանջներով առաջնորդվելը
- Սահմանել հիմնական գերակայությունները, մշակել կատարման համար անհրաժեշտ գործողություններն ու միջոցառումները
- Սահմանել հիմնականռազմավարություն, գնահատել եղած և անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական միջոցները
- Սահմանել ֆինանսատնտեսական գործունեություն, նախանշել ծրագրի իրականացմանն ակնկալվող արդյունքները
- Վերահսկողության մեխանիզմների սահմանումը

## ***Զարգացման ծրագրի իրավական հիմքերը***

- ՀՀ Սահմանադրություն
- «Երեխայի իրավունքների մասին » կոնվենցիա
- Աշխատանքային օրենսգիրք
- «Կրթության մասին » ՀՀ օրենք
- «Հանրակրթության մասին»
- «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին»
- «Նորմատիվ իրավական ակտերի մասին»
- Հանրակրթության պետական չափորոշիչի ձևավորման և հաստատման կարգ
- Դպրոցի կանոնադրություն
- Դպրոցի ներքին իրավական ակտեր  Կրթության ոլորտը կարգավորող այլ օրենսդրական իրավական ակտերորոշումներ, հրամաններ կարգեր

## ***Զարգացման ծրագրի իրականացման ժամանակահատվածը***

**2024-2029 թվականներ**

## ***Զարգացման ծրագրի նպատակը***

Պետության, հասարակության և անհատի զարգացման առաջնահերթություններից բխող բարձրակարգ կրթության և դաստիարակության ապահովմանը նպատակաուղղված համակողմանիորեն զարգացած, հայրենասեր և մարդասեր անհատի ձևավորումը՝ հենվելով կրթական արդի տեխնոլոգիաների և ոլորտի ժամանակակից միտումների վրա։

## ***Զարգացման ծրագրի խնդիրները***

Առաջիկա 5 տարում զարգացման առաջնահերթությունների կանխորոշում և կրթության որակի բարելավում։  Դպրոցի ներքին նորմատիվ իրավական ակտերի

վերաձևակերպում այնպես, որ այն բխի ծրագրում շարադրված առաջնահերթություններից և կրթության քաղաքականության ոլորտում տեղի ունեցող բարեփոխումներից

- Բարձրակարգ և ոլորտի առաջատար մասնագետների ներգրավում՝ սովորողների շրջանում սովորելու նկատմամբ հետաքրքրությունը մեծացնելու նպատակով:
- Դպրոցում ստեղծել մանկավարժների ստեղծագործական գործունեության համար պայմաններ, արժանապատիվ վարձատրություն, հարգանքի, համագործակցության և փոխվստահության մթնոլորտ:
- Այնպիսի կրթական ծրագրերի և գործողությունների մշակում, որոնք կապահովեն կրթական տարբեր աստիճաններում սովորողների կողմից չափորոշչային պահանջների յուրացումը, կնպաստեն նոր բովանդակության և նորարարական կրթական մեթոդների և մոտեցումների ներդրմանը, կապահովեն արդիականացված կրթական և առողջ միջավայր, որը կհամապատասխանի համայնքի կարիքներին, արդի կրթության պահանջներին, ինչպես նաև կնպաստի սովորողների էմոցիոնալ ինտելեկտի զարգացմանը, քննադատական մտածողության ձևավորմանը:
- 

## *Զարգացման ծրագրի տեսլականը*

Մինչև 2029 թվականը դառնալ հասարակության, տնտեսության, պետության զարգացող պահանջներին համապատասխան, տեսական ու կիրառական գիտելիքներ, գործնական հմտություններ ու ժամանակակից և նորարարական կարողություններ տրամադրող առաջատար հանրակրթական դպրոցներից մեկը հանրապետությունում:

## *Զարգացման ծրագրի ակնկալվող արդյունքները*

Երեխայի՝ սահմանադրությամբ ամրագրված կրթության իրավունքի իրացում՝ հիմնվելով գործող օրենսդրության վրա:

- Կրթության գաղափարախոսական հենքի ապահովում՝ հենվելով պետության և համամարդկային արժեքների ներդաշնակեցման սկզբունքների վրա:
- Որակյալ կրթության մատչելիության ապահովում:
- Սովորողների ստեղծագործական և ստեղծարար մտքի զարգացում՝ կրթության մեթոդների անհատականացման և արդիականացման միջոցով:

***Զարգացման ծրագրի ֆինանսավորման աղբյուրները***

- Պետական բյուջե
- Արտաբյուջետային միջոցներ
- Դրամաշնորհներ
- Բարերարներ և նվիրատուներ

***Զարգացման ծրագրի իրականացնողներ***

**Դպրոցի համակազմ՝ դպրոցի շահառուների հետ համագործակցությամբ:**

***Զարգացման ծրագրի վերահսկողության մեխանիզմները***

Ծրագրի իրականացման գործընթացը վերահսկվելու է սույն ծրագրի մշակված միջոցառումների միջոցով, որոնք պարբերաբար կարող են փոփոխվել և հարստացվել: Վերահսկողության միջոցով իրականացվելու է հաստատության արտաքին և ներքին արդյունավետության գնահատում: Վերահսկողությունը իրականացնելու է այն հավանության արժանացրած կառավարման խորհուրդը՝ հանրակրթության ոլորտը կանոնակարգող օրենսդրության համաձայն:

# 1.Հաստատության գործունեությունը

Կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է, որը ՀՀ կառավարության ներկայացմամբ հաստատում է ՀՀ Ազգային ժողովը:

Դպրոցի գործունեությունը պետք է նպատակաուղղված լինի սովորողի մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը, նրա անձի՝որպես ապագա քաղաքացու ձևավորմանը, ինքնուրույն կյանքի և մասնագիտական կրթության նախապատրաստմանը: Ժամանակակից գիտությունը և տեխնիկան զարգանում են մեծ արագությամբ՝ ներթափանցելով կյանքի կազմակերպման, հասարակական հարաբերությունների, գիտելիքների ձևավորման, գիտելիքների ձեռքբերման և փոխանցման ոլորտ: Այդ պատճառով հանրակրթության էական բարեփոխումը և աննախադեպ զարգացումը դառնում են անհրաժեշտ և անխուսափելի:

Պետության և ազգի անվտանգության ապահովման և հզորացման գործում գերակա խնդիր է դառնում պետական մտածելակերպ ունեցող և ապագայի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ մարդու ձևավորումը:Դպրոցում հոգևոր մշակույթի սաղմերը ամրապնդվում են ժողովրդի լինելիությամբ,բարգավաճմամբ և զարգացմամբ:

Ուսումնադաստիարակչական աշխատանքի հիմքում պետք է դրվի ազգային արժանապատվություն ունեցող հայ մարդու դաստիարակությունը, ով ճանաչում, ընդունում և հարգանքով է վերաբերվում իր և ուրիշ ժողովուրդներին, նրանց ստեղծած հոգևոր և մշակութային արժեքներին:

Հաստատության գործունեությունը համապատասխանում է պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի, շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին: Հաստատության լիարժեք գործունեության համար պետք է նպաստել սովորողի մոտ մարդասիրական, ազգային, համամարդկային արժեքների ձևավորմանը,սերմանելարժանապատվություն,հայրենասիրություն,պատասխանատվություն ,հանդուրժողականություն, զարգացնել բնապահպանական աշխարհայացքի ձևավորումը:

Կարևոր է նաև ուսուցողական միջավայրը դարձնել անվտանգ, հիգիենիկ, հետաքրքիր, գեղագիտական:

<<ՀՀ Լոռու մարզի Տաշիրի N 1 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, հանրակրթական հիմնական դպրոցի ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն է:

<<Տաշիրի թիվ 1 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ը գտնվում է ՀՀ Լոռու մարզ, ք.Տաշիր: Դպրոցը գործում է մեկ հերթով և հինգօրյա աշխատանքային ռեժիմով:

2017 թ.-ին գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետ. ռեգիստրի Տաշիրի տարածքային բաժնում: Նույն թվականին հաստատվել է դպրոցի կանոնադրությունը:

Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 20011թ.-ի մայիսի 5-ի հ.617-Ա/Ք հրամանով տրված լիցենզիաների՝ դպրոցն իրավունք ունի իրականացնելու հետևյալ ծրագրերը.




- տարրական ընդհանուր - 280 տեղով

- հիմնական ընդհանուր - 440 տեղով




## *Առաջին աստիճան – տարրական դպրոց*

### *Առաջին աստիճանի խնդիրները*

- Ուսումնառության նկատմամբ ձևավորել դրական շարժառիթների ամբողջություն Երեխաների ընդհանուր ընդունակությունների զարգացում և նրա ախտորոշումը
- Տարրական դպրոցին անհրաժեշտ գիտելիքների, կարողություններին հմտությունների ձևավորում
- Շրջապատող աշխարհի ամբողջականության ընկալում
- Շարունակել կրտսեր դպրոցի աշակերտների հոգեբանական նախապատրաստումը միջին օղակում սովորելու համար:
-

## *Երկրորդ աստիճան – հիմնական դպրոց*

### *Երկրորդ աստիճանի խնդիրները*

- ամուր, կայուն և խորը գիտելիքների ձևավորում, շրջապատող աշխարհի ամբողջական ընկալում
- հետագա մտավոր աշխատանքի հմտությունների ձևավորման կուլտուրան
  - շարունակել դաստիարակչական աշխատանքը ստեղծագործող անհատի և բարոյական բարձր որակներ ունեցող սովորողներ ձևավորելու ուղղությամբ
  - սովորողների և նրանց ծնողների հետագա շփումը առողջ ապրելակերպին:

Տաշիրի թիվ 1 հիմնական դպրոցը / մինչև 2013թ. Եղել է Տաշիրի թիվ 4 միջնակարգ դպրոց, նախկինում Կալինինոյի ռուսական դպրոց/ կառուցվել է 1969թ. իսկ վերակազմավորվել է 1986 թ: Այն նախատեսված է 700 աշակերտի համար: Դպրոցն անվանակոչված չէ:

Տաշիրի թիվ 1 հ/դ տիպային շենք է, բաղկացած է ընդհանուր 4 մասնաշենքերից՝ 1 եռահարկ, 1 երկհարկ, 1 մասնաշենք տրամադրված է նիստերի դահլիճին և սպորտդահլիճին, և 1 մասնաշենք էլ ՝ ամբողջությամբ տրամադրված է ճաշարանին: Դպրոցում առկա են բացօթյա մարզահրապարակ,արհեստանոց, ջեռուցման անհատական համակարգ, մշտական ջրամատակարարում,ինտերնետ կապ:

***<u>Դպրոցի եռահարկ մասնաշենքի</u>*** տանիքը վերանորոգվել է 2007թ, պատուհանները փոխված են, բայց ներսի վերանորոգման աշխատանքներ իրականացվել են 2012թ Մասնաշենքը ընդհանուր առմամբ բաղկացած է 15 դասասենյակներից , որոնցից 5-ը չի օգտագործվում / գտնվում են մասնաշենքի երրորդ հարկում/: Մասնաշենքի երրորդ հարկում դասապրոցես չի իրականացվում, քանի որ համարվում է 2-րդ աստիճանի վթարային / ըստ համապատասխան եզրակացության/: Մասնաշենքում առկա է 5 սանհանգույց ՝ 2-ը նախատեսված է տղաների , 2-ը՝ աղջիկների և 1-ը ուսուցիչների համար: Սանհանգույցները գտնվում են անմխիթար վիճակում և ունեն հիմնանորոգման կարիք: Դասասենյակներում 2019թ. Իրականացվել է կոսմետիկ վերանորոգում, ներկվել է հատակը, պատերը, իսկ 1 դասասենյակի հատակը հիմնովին փոխել է: Մասնաշենքում առկա է գրադարան, տնային

թատրոն, նախնական զինվորական պատրաստության դասասենյակ, բուժկետ, ուսուցչանոց, համակարգիչների սենյակ:

***Երկհարկանի մասնաշենքում*** ակա է 9 դասասենյակ, 1 ուսուցչանոց, շախմատի սենյակ, գրադարան: Մասնաշենքի տանիքը վերանորոգվել է 2012թ., բայց դասասենյակները 1969թ.-ից մինչև 2019թ. չի վերանորոգվել: 2019թ. հուլիս- օգոստոս ամիսների ընթացքում հիմնովին վերանորոգվել են 8 դասասենյակներ, 1 դասասենյակի հատակն ամբողջությամբ հիմնանորոգել է: Մասնաշենքի ներսի հատվածի աստիճանները սալիկապատված են:

***3-րդ մասնաշենքը*** բաղկացած է նիստերի դահլիճից, սպորտդահլիճից և երկու հանդերձարաններից, որոնք գտնվում են անմխիթար վիճակում: Նիստերի դահլիճը 1969թ. ից երբևէ չի վերանորոգվել, սպորտդահլիճը վերանորոգվել է 2006թ., իսկ հանդերձարանները հիմնովին վերանորոգել է 2022թ.:

***4-րդ մասնաշենքում*** գործում է ճաշարան, որը 1969թ. ից չէր վերանորոգվել մինչև 2021թ.: 2021 թ. մայիս ամսվա ընթացքում հիմնանորոգվել է ճաշարանի տանիքն ամբողջությամբ /430 $մ^2$ մակերեսով/, իսկ ճաշարանն ամբողջությամբ հիմնանորոգվել է 2021. օգոստոս-սեպտեմբեր ամիսների ընթացքում ՄԱԿ-ի աջակցությամբ/ 2,7 մլն. դրամ/ և մոտ 3,6 մլն. դրամ դպրոցի միջոցների հաշվին:Շենքին կից կա սենյակ,որը նախատեսվում է վերակառուցել ՝ որպես տեխնոլոգիայի կաբինետ:

| **Շենքային պայմանները** | **Քանակը** | **Փաստացի վիճակը** |
|---|---|---|
| մասնաշենք | 4 | բավ |
| Դասասենյակ | 18 | բավ |
| Գրադարան | 1 | բավ |
| ԿԱՊԿու դասասնյակ | 0 | լավ |
| Համակարգչային սենյակ | 1 | բավ |
| Մարզադահլիճ | 1 | լավ |
| ՈՒսուցչանոց | 1 | լավ |
| Տնօրենի կաբինետ | 1 | լավ |
| <<Արմաթ>> ինժեներական լաբորատորիա | 1 | լավ |
| Ճախմատի սենյակ | 1 | լավ |
| Խոհանոց | 1 | լավ |
| Սննդի պահեստ | 1 | լավ |
| Սանհանգույցներ | 4 | Բավ |
| Ռազմագիտության կաբինետ(զենքի պահեստ) | 1 | բավ |

## ***Մարդկային ռեսուրսներ***

Դպրոցն ունի թվով 52 աշխատակից, որոնցից 26-ը մանկավարժ՝ բարձրագույն մասնագիտական որակավորմամբ:

| N | **Մարդկային ռեսուրսներ** | **քանակ** |
|---|---|---|
| 1. | ՈՒսուցիչների ընդհանուր թիվ | 26 |
| 2. | Վարչական աշխատողներ | 3 |
| 3. | Սովորողների թիվ | 419 |
| 4. | Բարձրագույն կրթության ուսուցիչներ | 25 |
| 5. | Միջին մասնագիտական որակավորմամբ ուսուցիչներ | 0 |
| 6. | ՈՒսուցչի օգնական | 3 |
| 7. | Կամավոր ատեստավորված ուսուցիչներ | 2 |
| 8. | Առարկայական մեթոդմիավորումներ | 4 |
| 9 | Դասղեկ | 18 |
| 9. | ՈՒսումնաօժանդակ անձնակազմը | 14 |
| 10. | օպերատոր | 1 |
| 11. | Հաշվապահ | 1 |

| | | |
|---|---|---|
| 12. | Գործավար կամ անձնական կառավարմանմասնագետ | 1 |
| 13. | Գրադարանավար | 1 |
| 14 | հոգեբան | 1 |

## *Մանկավարժական համակազմը*

| **Մանկավարժական հաստիքիանվանումը** | **Հաստիքի թիվը** |
|---|---|
| Վարչատնեսական համակարգող | 1 |
| Տնօրեն | 1 |
| Տնօրենի տեղակալ ուսումնական գծով | 2 |
| Տնօրենի տեղակալ ՄԿԱ-ի գծով | 1 |
| ԴԱԿ | 1 |
| Հոգեբան | 1 |
| Զինղեկ և քաղպաշտպանություն | 1,3 |
| ՈՒսուցչի օգնական | 1.5 |

## *ՈՒսումնաօժանդակ անձնակազմ*

| | |
|---|---|
| օպերատոր | 1 |
| Գործավար կամ անձնական կառավարման մասնագետ | 1.5 |
| Հավաքարար | 4 |
| Գրադարանավար | 1 |
| Պահակ | 4 |
| Հոգեբան | 1 |
| Հնոցապան | 0,5 |
| Խոհարար | 1.3 |

# 2.ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

## *2.1ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ*

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄ |
|---|---|
| • Դպրոցը ընդհանուր առմամբ ունի բավարար շենքային պայմաններ<br>• Դպրոցի տարածքը մետաղական ցանկապատով առանձնացված է<br>• Դպրոցի ամբողջ տարածքում պարբերաբար իրականացվում են մաքրման և պահպանողական միջոցառումներ<br>• արտակարգ իրավիճակներում հատուկ ծառայությունների մեքենաները կարող են անարգել մոտենալ ուսումնական հաստատությանը<br>• կոսմետիկ վերանորոգված դասասենյակներ,մեծ ու լուսավոր<br>• <<Արմաթ>> ինժեներական լաբարատորիայի առկայություն անհրաժեշտ գույքով<br>• Մեծ, լուսավոր և կահավորված ուսուցչանոց<br>• Լուսավոր միջանցքներ<br>• համակարգչային սենյակի առկայություն<br>• բուժկետի առկայություն<br>• գրադարան՝ համալրված անհրաժեշտ գրքերով | • սանհանգույցների անմխիթար վիճակ, որոնք ունեն վերանորոգման կարիք /թվով 4/<br>• նիստերի դահլիճի առկայություն, որն ունի վերանորոգման կարիք<br>• 1 լաբարատորիայի առկայություն, որն ունի ժամանակակից գույքի համալրման<br>• Դպրոցն ունի 1 համակարգչային սենյան՝ ոչ բավարար գույքով,<br>• Դասարաններում ուսուցչի համար համակարգչի բացակայություն<br>• ներառական կրթության կազմակերպման համար շենքային պայմանների անհարմարություն<br>• ժամանակակից պահանջներին համապատասխան առարկայական դասասենյակների բացակայություն<br>• դպրոցի անբարեկարգ բակ<br>• ԿԱՊԿՈՒ աշակերտների համար նախատեսված դասասենյակի բացակայություն՝համապատասխան գույքով |

| ՆՊԱՏԱԿ | ԽՆԴԻՐ |
| --- | --- |

| | |
| --- | --- |
| • շախմատի սենյակի առկայություն<br>• վերանորոգված սպորտդահլիճ և հանդերձարաններ<br>• Ճաշարանի առկայություն՝ անհրաժեշտ գույքով և տեխնիկայով<br>• ֆիզիկայի լաբարատորիայի առկայություն<br>• Դպրոցն ունի արհեստանոց ՝ անհրաժեշտ նյութերով<br>• Դպրոցի տանիքը վերանորոգված է<br>• դպրոցի բոլոր հարկերում փակցված են տարհանման պլան- սխեմաները<br>• Դպրոցն ունի մարզահրապրկ<br>• ունի անհատական ջեռուցման համակարգ<br>• Ունի մշտական ջրամատակարարում<br>• ինտերնետ կապի առկայություն | |

| | |
|---|---|
| Յուրաքանչյուր սովորողի կրթական գործընթացին առավելագույն մասնակցությունը և ֆիզիկական մատչելիությունն ապահովող հարմարեցված միջավայրի բարելավում | ❖ Ապահովել շենքային բավարար ֆիզիկական պայմաններ, սովորողների կրթական կարիքների իրացման գործը նպատակին հասցնելու համար<br>❖ ստեղծել համընդհանուր ներառման համար հարմարեցված միջավայր |
| ՌԻՍԿԵՐ | ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
| ❖ վերանորոգման աշխատանքների համար նախատեսվծ ֆինանսական միջոցների սակավություն,այդ թվում բարեգործական միջոցների բացակայություն<br>❖ ֆորսմաժորային իրավիճակներ,բնական աղետներ | ❖ Համագործակցել հովանավորների , դոնոր կազմակերպությունների հետ<br>❖ Շենքային հողային մեծ , ազատ, մաքուր տարածք |

| ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ | ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇ | ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ՊԱՐԱԳԱՆԵՐ | ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ, ՍՏՈՒԳՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ | ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|
| Պահպանել շենքի տարածքի անվտանգության շահագործումը | Տնօրեն, վարչատնտեսական մասի համակարգող | Առողջ և պահով դպրոցակն միջվայր | Մարդկային ռեսուրս | մշտադիտարկում | Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում | Ֆինանսավորում չի պահանջում |
| Սանհանգույցների վերանորոգում | | Բարեկարգված սանհանգույցներ | Շինանյութ և շինարարական այլ նյութեր | Կառավարման խորհուրդ<br>Լիազոր մարմին<br>Ֆինանսական հաշվետվություններ | 2026-2027թթ | Պետբյուջե<br>Դրամաշնորհային ծրագրեր |
| Լաբարատորիայի տարածքի վերանորոգումև գույքի համալրում | Տնօրեն, վարչատնտեսական մասի համակարգող | Վերանորոգված լաբարատորիայի առկայություն՝ ժամանակակից գույքով | Շինանյութ և շինարարական այլ նյութեր,անհրաժեշտ գույք | Կառավարման խորհուրդ<br>Լիազոր մարմին<br>Ֆինանսական հաշվետվություններ | 2026-2027թթ | Պետբյուջե<br>Դրամաշնորհային ծրագրեր |
| Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների, սմարթ գրատախտակի | Տնօրեն, վարչատնտեսական մասի համակարգող | Սմարթ դասասենյակի առկայություն | Սմարթ գրատախտակ | Կառավարման խորհուրդ<br>Լիազոր մարմին<br>Ֆինանսական հաշվետվություններ | 2024-2025թթ | Պետբյուջե<br>Դրամաշնորհային ծրագրեր |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| ներդնում | | | | եր | | |
| Դպրոցի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ | Տնօրեն, վարչատնտեսական մասի համակարգող Խորհդակցական մարմիններ | Բարելավված ուսումնական միջավայր | Շինանյութ և այլ պարագաներ | Կառավարման խորհուրդ Լիազոր մարմին Ֆինանսական հաշվետվություններ | Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում | Լրացուցիչ միջոցների առկայություն պետբյուջե |
| Բակի բարեկարգում | Տնօրեն, վարչատնտեսական մասի համակարգող Խորհդակցական մարմիններ աշակերտներ | Բարեկարգ և անվտանգ բակ՝ թարմեցված ծաղիկներով և դեկորատիվ ծառերով | Շինանյութ և այլ պարագաներ, ծաղիկներ, | մշտադիտարկում | 2028-2029թթ | Լրացուցիչ միջոցների առկայություն |
| Տեխնոլոգիայի կաբինետի ստեղծում | Տնօրեն, վարչատնտեսական մասի համակարգող | Բարելավված ուսումնական միջավայր | Շինանյութ և այլ պարագաներ, համապատասխան սարքավորումներ | Կառավարման խորհուրդ Լիազոր մարմին Ֆինանսական հաշվետվություններ | 2028-2029թթ | Պետբյուջե Դրամաշնորհային միջոցներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Դպրոցամերձ հողամասի մշակում | Տնօրեն փոխտնօրեն դասղեկներ աշակերտներ | Համախմբված աշխատանք ստացված բերքի տրամադրում ճաշարանին | Սերմեր,մշակման համար անհրաժեշտ պարագաներ | տնօրենություն | 2024-2029թթ | Մարդկային ռեսուրսներ |
| Առաջին մասնաշենքի 3 հարկի վթարային վիճակի վերացում | Տնօրեն, վարչատնտեսական մասի համակարգող Խորհրդի նախագահ | Անվտանգ ուսումնական միջավայր | Շինանյութ և այլ պարագաներ, | Կառավարման խորհուրդ Լիազոր մարմին Ֆինանսական հաշվետվություններ | 2024-2026թթ | Պետբյուջե |

# 2.2ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ուսումնանյութական բազայի համալրումն ու արդիականացումը շարունակական բնույթ է կրում և համալրումը ներառված է նյութատեխնիկական բազայի գործողությունների պլանում,որն էլ կարևոր ռազմավարական ուղղություններից է:

| ԳՈՒՅՔ,ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ | ՔԱՆԱԿԸ |
|---|---|
| Պահարան | 63 |
| Գրատախտակ | 25 |
| Էլ. զանգ | 2 |
| Սեղան | 114 |
| Մետաղյա գրապահարան | 8 |
| Աշակերտական սեղան աթոռ | 116 |
| Աշակերտական նստարան | 230 |
| Հեռախոս | 2 |
| Համակարգիչ | 12 |
| Աշակերտական սեղան-նստարան | 118 |
| Հանդերձապահարան | 5 |
| Մանկական սեղան աթոռ | 10 |
| Տպիչ | 2 |
| Համակարգչի սեղան | 7 |
| Ջրատաքացուցիչ | 1 |

| | |
|---|---|
| Խոհանոցի պահարան | 1 |
| Հիգիենիկ սեղան | 6 |
| Կախիչ շորի | 1 |
| Այծիկ սպորտային | 1 |
| Մարմնամարզության պատ | 3 |
| Զին․ պատրաստվածության վահան | 1 |
| Ուժաչափ | 1 |
| Մաթեմատիկական կշեռք | 2 |
| Ֆուտբոլի գնդակ | 7 |
| Կշեռք/բուժքույր/ | 1 |
| Սպորտային օղակներ | 20 |
| Սպորտային պարկ | 2 |
| Օլիմպիկան ստենդ | 2 |
| Հեծանիվի հարթակ | 3 |
| Վահանակներ | 4 |
| Գրադարանի դարակներ | 4 |
| Սպորտայի ձիուկ | 1 |
| Թենիսի սեղան | 1 |
| Բազմոց | 4 |
| Տնային կինոթատրոն | 1 |
| Դաշնամուր | 1 |
| Գրասենյակային սեղան | 1 |
| Երաժշտական բարձրախոս | 1 |
| Գրասենյակային աթոռ | 12 |

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄ |
| --- | --- |
| • Ամբողջական լոկալ ջեռուցում<br>• մշտական ջրամատակարարում<br>• <<Արմաթ>> ինժեներական լաբարատորիայի առկայություն անհրաժեշտ գույքով<br>• բուժկետի առկայություն բավարար միջոցներով<br>• ճաշարանի առկայություն անհրաժեշտ գույքով և տեխնիկայով<br>• լուսավոր ուսուցչանոց անհրաժեշտ գույքով<br>• շախմատի սենյակ՝ անհրաժեշտ պարագաներով<br>• գրադարան ՝ անհրաժեշտ գրքերով<br>• տնօրենի կաբինետ՝ բավարար գույքով<br>• փոխտնօրենի կաբինետ ՝ անհրաժեշտ գույքով<br>• | • ուսումնական բազայի պակաս /քարտեզներ, պաստառներ, գրքեր,համկարգիչներ<br>• գրադարնը կարիք ունի գրքերի համալրման,և ընթերցասրահի բացակայություն<br>• սանհանգույցները /թվով 4/ կարիք ունեն վերանորոգման<br>• տեխնոլոգիայի կաբինետի<br>• նզպ կաբինետ,որն ունի վերանորոգման կարիք<br>• առարկայական կաբինետների և սարքավորումների բացակայություն<br>• համակարգիչների սակավություն<br>• ոչ ժամանակակից համակարգիչների առկայություն<br>• ԿԱՊԿՈՒ աշակերտների համար նախատեսված դասասենյակի բացակայություն՝համապատասխան գույքով |

| ՆՊԱՏԱԿ | ԽՆԴԻՐՆԵՐ |
|---|---|
| Ուսման որակի բարձրացում, ուսուցիչների ուսուցման և աշակերտների ուսումնառության մոտիվացում նյութատեխնիկական բազայի արդի պարագաների միջոցով | Դպրոցի նյութատեխնիկական բազան համալրել ժամանակի պահանջներին համապատասխան ուսումնական գույքով և նյութերով՝ ուսման որակը բարձրացնելու նպատակով |
| **ՌԻՍԿԵՐ** | **ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ** |
| ❖ Ֆինանսական միջոցների պակաս<br>❖ Ֆինասնավորման պակաս կապված աշակերտնեի թվի հետ<br>❖ Ֆորսմաժորային իրավիճակներ | ❖ Հանդիպումներ կազմակերպել համայնքի ներկայացուցիչների հետ<br>❖ Կապեր հաստատել արտերկրի ֆինանսական մեծ հնրավորություններ ունեցող շրջանավարտների հետ<br>❖ Տնօրենի և վարչատնտեսակն համակարգողի գործառույթների ճիշտ բաշխում |

| ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ | ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇ | ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ՊԱՐԱԳԱՆԵՐ | ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ, ՍՏՈՒԳՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ | ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|
| Նիստերի դահլիճի վերանորոգում,գույքի համալրում | Վարչատնտեսական համակարգող տնօրեն հաշվապահ | Ժամանակակից մոդուլներին համապատասխան նիստերի դահլիճ | Աթոռներ,ամբիոն,սինարարական այլ նյութեր | Մշտադիտարկում | 2026-2027թթ | Պետբյուջե Օրենքով չարգելված ֆինանսական այլ աղբյուրներ |
| Բուժկետի նյութատեխնիկական բազայի հարստացում | Վարչատնտեսական հմակարգող տնօրեն հաշվապահ | Անհրաժեշտ սարքավորումներով և բարենպաստ պայամններով զինված բուժկետ | Դեղեր,խելացի ջերմաչափեր, առաջին օգնության պարագաներ | Մշտադիտարկում, ֆինանսական հաշվետվություններ | 2024-2025թթ | Պետբյուջե Օրենքով չարգելված ֆինանսական այլ աղբյուրներ |
| Առարկայական կաբինետների ստեղծում | Վարչատնտեսական հմակարգող տնօրեն հաշվապահ | Բարենպաստ պայմաններ դասապրոցեսը լիարժեք կազմակերպելու նպատակով | Շինանյութ, շինարարական այլ պարագաներ, անհրաժեշտ գույք | Մշտադիտարկում, ֆինանսական հաշվետվություններ | 2024-2029թթ | Պետբյուջե Օրենքով չարգելված ֆինանսական այլ աղբյուրներ |
| Սմարթ գրատախտակի ձեռքբերում | Վարչատնտեսական հմակարգող տնօրեն հաշվապահ | Ուսումնական միավայրի արդիականացում | Սմարթ գրատախտակ | Կառավարման խորհուրդ ներքին գնահատման ֆինանսական հաշվետվություններ | 2024-2025թթ | Պետբյուջե Օրենքով չարգելված ֆինանսական այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Բազմաֆունկցիոնալ տպիչ-սարքի ձեռքբերում | Վարչատնտե սական համակարգող տնօրեն հաշվապահ | Ուսումնական միջավայրի արդիականացում | Տպիչ սարք | Կառավարման խորհուրդ ներքին գնահատման ֆինանսական հաշվետվություններ | 2024-2025թթ | Պետբյուջե Օրենքով չարգելված ֆինանսական այլ աղբյուրներ |
| Սպորտդահլիճի Վերանորոգում, Սպորտգույքի համալրում | Վարչատնտե սական համակարգող տնօրեն հաշվապահ | Ժամանակակից մոդուլներին համապատասխան սպորտդահլիճ | Մարզագույք | Մշտադիտարկում | 2026-2027թթ | Պետբյուջե Օրենքով չարգելված ֆինանսական այլ աղբյուրներ |
| | | | | | | |

# 2.3 ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Դպրոցը սերտորեն համագործակցում է և կառավարման,և խորհրդակցական մարմինների հետ,դպրոցի գործունեւությունը բաց է և թափանցիկ:

***Կառավարման խորհուրդը*** գործում է և մշտապես գործել է դպրոցի կանոնադրության և լիազոր մարմնի կողմից սահմանված կարգերով իրեն վերապահված գործառույթներին համապատասխան:նրանց գործունեությունը միտված է դպրոցի բնականոն զարգացմանը: Խորհուրդը շահագրգիռ է դպրոցի առաջընթացի հարցում,պատրաստակամորեն աջակցում է բոլոր նախաձեռնություններին:Դպրոցի կառավարման խորհուրդը օրենքով նախատեսված պարբերականությամբ հրավիրում է նիստեր,քննարկում դպրոցի խնդիրները,իր լիազորությունների շրջանակներում կատարում է առաջարկություններ:կառավարման խորհրդի անդամները ակտիվ մասնակցությւն ունեն ինչպես խորհրդակցական մարմնի լիազորություններից բխող աշխատանքների իրականացմանը,այնպես էլ դրոցի կազմակերպչական,կրթադաստիարակչական տարբեր միջոցառումներում:

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄ |
|---|---|
| • դպրոցում գործում են կանոնադրության համաձայն ձևավորված կոլեգիալ կառավարման մարմինը, խորհուրդը և խորհրդակցական մարմինները<br>• կառավարման մարմինների արդյունավետ աշխատանք<br>• սերտ կապը դպրոցի | • արտաքին կապերի ստեղծման պակաս<br>• թույլ մասնակցություն ուսումնական պրոցեսի կազմակերպման մեջ<br>• կարողունակությունների կիրառման պակաս<br>• խորհուրդի կարևորության նվազում<br>• խորհրդի անդամների մոտիվացիայի |

| | |
|---|---|
| խորհրդակցական մարմինների հետ/միջոցառումներ,սեմինարներ/<br>• օրինակելի փաստաթղթաշրջանառություն<br>• ներքին իրավական ակտերի կանոնակարգում ու վերահսկողություն<br>• խորհրդակցական մարմինների կողմից իրենց գործառույթների հստակ իրազեկում<br>• խորհրդակցական մարմինների համագործակցային մթնոլորտի առկայություն սեփական նախաձեռնողական մոտեցում | պակաս<br>• կառավարման խորհրդի անդամների հաճախակի փոփոխություն<br>• դպրոցը չունի հոգաբարձուների խորհուրդ,շրջանավարտների խորհուրդ<br>• կառավարման խորհրդի նիստերին անդամների բացակայություններ |

| ՆՊԱՏԱԿ | ԽՆԴԻՐՆԵՐ |
|---|---|
| ❖ Խորհրդակցական մարմինների ընդլայնում նրանց միջև հմագործակցությունը և խթանելու նպատակով<br>❖ Կառավարման և խորհրդակցական մարմինների ուժերի օգտագործում լավագույն դպրոցի ստեղծման համար | ❖ ապահովել կառավարման և խորհրդակցական մարմինների արդյունավետ աշխատանք<br>❖ ընդլայնել դպրոցի խորհրդի լիազորությունները և իրավական խնդիրները |
| **ՌԻՍԿԵՐ** | **ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ** |
| ❖ Կառավարման խորհրդակցական մարմինների անտարբերությունը<br>❖ դպրոցական կառավարմանը մասնակցող խորհրդակցական մարմինների գործունեության հնարավոր բացասական ազդեցություններ<br>❖ մոտիվացիայի պակաս | ❖ խթանմն միջոցների կիրառում |

| ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ | ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇ | ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ՊԱՐԱԳԱՆԵՐ | ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ, ՍՏՈՒԳՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ | ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|
| Աջակցել դպրոցի կառավարման խորհրդի և խորհրդակացական մարմինների աշխատանքին | Տնօրեն Խորհրդի անդամներ Խորհրդի նախագահներ | Համագործակցող խորհրդի անդամներ | Խորհրդի ձևավորման կարգ | Ներքին գնահատման հաշվետվություն Խորհրդի նախագահ | 2024-2029թթ | Ֆինանսավորում չի պահանջվում |
| Խրախուսել արդյունավետ համագործակցությունը կառավարման և խորհրդակցական մարմինների միջև | Տնօրեն Խորհրդի անդամներ Խորհրդի նախագահներ | Դպրոցի կառավարման ժողովրդականացում | Քննարկումներ հարցազրույցներ | Տնօրեն Խորհրդի նախագահ | 2024-2029թթ | Ֆինանսավորում չի պահանջվում |
| Զարգացնել կառավարման խորհրդակցական մարմիններրի կարողությունները | Տնօրեն Խորհրդի անդամներ Խորհրդի նախագահներ | Իր գործառույթներին պատշաճ տիրապետող խորհրդի անդամ | Քննարկումներ Հարցազրույցներ | Կառավարման հմտություններ | 2024-2029թթ | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Ապահովել մյուս խորհուրդների հետ սերտ համագործակցութ յուն | Տնօրեն Խորհրդի անդամներ Խորհրդի նախագահներ | Իր գործառույթներին պատշաճ տիրապետող և մոտիվացված խորհրդի անդամ | Խորհրդի ձևավորման կարգ | Խորհրդի նախագահի ներքին գնահատման հաշվետվություն | 2024-2029թթ | Ֆինանսավորում չի պահանջվում Մարդկային ռեսուրսներ |
| Խորհրդի անդամի վերապատրաստում | Տնօրեն Խորհրդի անդամներ Խորհրդի նախագահներ | Իր գործառույթներին պատշաճ տիրապետող և մոտիվացված խորհրդի անդամ | Խորհրդի ձևավորման կարգ | Խորհրդի նախագահի ներքին գնահատման հաշվետվություն | 2024-2029թթ | Մարդկային ռեսուրսներ |

## 2.4 ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ,ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ,ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Ուսումնական աշխատանքների կազմակերպման, դպրոցի առջև ծառացած խնդիրների լուծման, առկա դժվարությունների հաղթահարման և կանխանշված նպատակների իրագործման համար կարևորվել է դպրոցի համակարգված աշխատանքը կրթության պետական կառավարման լիազոր մարմինների, վարչական շրջանի, ծնողական համայնքի, տարբեր շահառու կազմակերպությունների հետ համագործակցության ապահովման ուղղությամբ: Համատեղ քննարկումներն ու տարբեր միջոցառումներում ներգրավածության ապահովումը նպաստել են մասնակցային մշակույթի ձևավորմանը, դպրոցի հեղինակության բարձրացմանը, դպրոցի գործունեության թափանցիկության ապահովմանը: Այս տարիների ընթացքում դպրոցում ձևավորվել է համայնքային ակտիվ դպրոցին ներկայացվող պահանջներին համապատասխան միջավայր:

Լիազոր մարմնի և վարչական շրջանի աշխատակազմի ներկայացուցիչները ևս հրավիրվում են դպրոցում կազմակերպվող միջոցառումներին: Դպրոցի աշակերտներն իրականացնում են տարբեր նախագծային- հետազոտական աշխատանքներ համայնքի առանձնահատկությունների, կարիքների բացահայտման ուղղությամբ:

Համագործակցության որոշ շրջանակներ ներկայացվում են ստորև.




| ՈՒԺԵՂ ԿՈՂՄ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄ |
|---|---|
| Մշտական համագործակցություն տարբեր կառույցների հետ՝<br>• ԿԳՄՍՆ<br>• ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ<br>• ԳԹԿ<br>• ԿՏԱԿ<br>• ԴՊՐՈՑՆԵՐ<br>• ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ<br>• ՏՄԱԿ<br>• ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ և այլ հաստատություններ<br>• ՀԿ-ներ և այլ կառույցներ<br>• Համագործակցության շրջանակներում տարբեր համատեղ միջոցառումների կազմակերպում<br>• Արդյունավետ հաղորդակցություն համայնքի և տարբեր կառույցների հետ | • Միջազգային կառույցների հետ համագործակցության փորձի բացակայություն<br>• Դպրոցների համար հայտարարված դրամաշնորհային և բարեգործական ծրագրերի սահմանափակ առկայություն կամ բացակայություն |

| | |
|---|---|
| **ՆՊԱՏԱԿ** | **ԽՆԴԻՐՆԵՐ** |
| Արդյունավետ համագործակցութան և հաղորդակցության ապահովում կրթության ոլորտի զարգացման գործառույթներ իրականացնող տարբեր կառույցների և շահառուների հետ: | Համագործակցող կազմակերպությունների շրջանակի ընդլայնում՝ ի շահ դպրոցի գործունեության արդյունավետության բարելավման |
| **ՌԻՍԿԵՐ** | **ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ** |
| Համայնքի հետ համագործակցության սահմանափակ հնարավորություններ | • Համայնքի հետ համատեղ իրականացվող ծրագրերի մշակում<br>• Կրթական ծրագրեր իրականացնող տարբեր միջազգային կառույցների հետ հանդիպումների ընթացքում դպրոցի գործունեության լուսաբանում և համագործակցության ծրագրերի առաջարկների ներկայացում: |

| ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ | ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇ | ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ՊԱՐԱԳԱՆԵՐ | ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ, ՍՏՈՒԳՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ | ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|
| Դպրոցի հետ համագործակցող կազմակերպությունների հետ հանդիպումների ու քննարկումների կազմակերպում | Դպրոցի տնօրեն, տնօրենի տեղակալներ, կառավարման և խորհրդակցական մարմիններ, գործընկեր դպրոցներ | Համագործակցության շրջանակի ընդլայնում, գործընկեր դպրոցների թվի ավելացում | Հանդիպումների և քննարկումների տարբեր հարթակներ (առկա և հեռավար) | մշտադիտարկում ներքին գնահատման հաշվետվություններ | 2024-2029թթ | պետական բյուջե |
| Համայնքի հետ ավանդույթ դարձած տարբեր միջոցառումների մասնակցություն | Դպրոցի տնօրեն, տնօրենի տեղակալներ, խորհըրդակցական մարմիններ | Համատեղ մշակված ծրագրերի առկայություն | Հանդիպումների և քննարկումների տարբեր հարթակներ (առկա և հեռավար | Մշտադիտարկում ներքին գնահատման հաշվետվություններ | 2024-2029թթ | պետական բյուջե մարդկային ռեսուր |
| Տարբեր կազմակերպությունների հետ համագործակցության գնահատման ռուբրիկի մշակում | Դպրոցի տնօրեն, տնօրենի տեղակալներ, խորհըրդակցական | Հետագա համագործակցության ճշտված կարիքների քարտեզագրում | Հարցաթերթիկներ, հարցումների արդյունքներ | Ներքին գնահատման հաշվետվություններ | 2024-2029թթ | մարդկային ռեսուր |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | մարմինների ղեկավարներ | | | | | |

Դասարանների ծնողական խորհուրդները ընտրվում են դասարանի ծնողների ընդհանուր ժողովի կողմից մեկ ուսումնական տարվա համար:

***__Ծնողական խորհուրդը__*** իր մասնակցությունն է ունեցել դասարանական և համադպրոցական միջոցառումների կազմակերպմանը,աջակցել դպրոցին՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների կազմակերպման գործում․ծնողներին ներգրավել սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում,մասնակցել դպրոցի ներքին գնահատման հաշվետվությունների կազմման նպատակով ձևավորված հանձնաժողովի աշխատանքների իրականացմանը և հաշվետվությունների կազմմանը, ծնողազուրկ և սոցիալապես անապահով երեխաներին նյութական նյութական օգնություն ցույց տալու աշխատանքներին և այլն: Տնօրենի կողմից մշտապես խրախուսվել է կառավարման և խորհրդակցային մարմինների հետ համագործակցությունը:

## ***__Աշակերտական համակազմ__***

Հաստատությունում մասնակցային մշակույթի ձևավորման գործում կարևոր դերակատարում ունի աշակերտական խորհուրդը, որի կազմում ընդգրկված է 20 աշակերտ: Դպրոցի գործունեության պլանավորման ընթացքում ևս կարևորվել է աշակերտական խորհրդի դերը: Վերջինիս կողմից արված առաջարկները ներառվել են դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորման ուղղություններում:Մանկավարժական խորհրդի՝ աշակերտների վերաբերվող հարցերի քննարկմանը մասնակցել են նաև աշակերտական խորհրդի ներկայացուցիչներ: Ներքին գնահատման հաշվետվությունների կազմման ընթացքում աշակերտական խորհրդի կողմից իրականացվել են հարցումներ աշակերտների շրջանում, որի արդյունքների վերլուծությունը հիմք է հանդիսացել դպրոցի գործունեության ոլորտների պլանավորման համար:

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄ |
|---|---|
| • դպրոց-ծնող առողջ համագործակցություն<br>• իրավունքների և պարտականությունների գիտակցում<br>• ակտիվ մասնակցությունը դպրոցի գործունեությանը<br>• կարծիքների ազատ արտահայտում | • լիազորությունների և պարտականությունների գիտակցման պահանջ<br>• այլ ծրագրերի մոտիվացիայի պակաս<br>• թերի է ծնողների գործոն մասնակցությունը մասնագիտական կողմնորոշման աշխատանքներին, ներհամայնքային միջոցառումներին |

| ՆՊԱՏԱԿ | ԽՆԴԻՐ |
|---|---|
| ❖ Դպրոց –ծնող կապի ապահովում<br>❖ սովորողների մոտիվացիայի խթանում,ուսումնառության որակի բարելավում,աշակերտական ինքնավարության խթանում,արժեհամակարգի ձևավորում | ❖ նպաստել ծնողների՝ իրենց երեխայի մասին հնարավորինս առավել ինֆորմացված լինելու<br>❖ սովորողների ինքնավարության և ինքնակառավարման նպատակով ակտիվացնել աշակերտական խորհրդի գործունեությունը<br>❖ խթանել հետաքրքրությունը դեպի դպրոցը<br>❖ նախաձեռնողականության մոտիվացիայի բարձրացում |
| ՌԻՍԿԵՐ | ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
| • աշակերտների ինքնակատարելագործման շահագրգռվածության նվազում<br>• ծնողական համայնքի կողմից դպրոցական գործունեության մասնակցության պասիվություն | • միջոցառումների,սեմինարնեռի կազմակերպում,ֆիլմերի դիտում, հանդիպումներ համայնքայինկառույցների հետ<br>• ՏՀՏ ծրագրերի ներդնում աշխատանքային գործունեության |

| | |
|---|---|
| • աշակերտի գերծանրաբեռնվածություն | մեջ<br>• նոր ՀՊՉ-ով նախատեսված աշակերտի ծանրաբեռնվածության նվազեցում |

## *Մանկավարժական խորհուրդ*

Ըստ դպրոցի կանոնադրության՝ մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են ուսումնական հաստատության բոլոր մանկավարժական աշխատողները: Յուրաքանչյուր ուսումնական տարին սկսելուց առաջ՝ օգոստոս ամսվա մանկավարժական խորհրդի առաջին նիստում, ձևավորվել է մանկավարժական խորհրդի կազմը և հաստատվել տնօրենի կողմից: Անհրաժեշտության դեպքում մանկավարժական խորհրդի այն նիստերին, որի ընթացքում քննարկվել են սովորողներին անմիջականորեն վերաբերող հարցեր, խորհրդակցական ձայնի իրավունքով հրավիրվել են ծնողներ, աշակերտական խորհրդի ներկայացուցիչներ: Մանկավարժական խորհրդի կողմից երկու ներկայացուցիչ ընդգրկված է հաստատության կառավարման խորհրդի կազմում: Դպրոցի կանոնադրությամբ ամրագրված գործառույթների շրջանակում մանկավարժական խորհրդի նիստերում քննարկվել են ուսուցման բովանդակության, սովորողների ուսումնառության որակի, նրանց հետ իրականացվող արտադասարանական աշխատանքների կազմակերպման, խմբակների, երկարօրյա խմբերի և ուսումնական կաբինետների ձևավորման, ինչպես նաև մասնագիտական կողմնորոշման կենտրոնների ստեղծման, հանրակրթական հիմնական ծրագրերի իրագործման, ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման և այլ գործառույթների հետ կապված հարցեր, ընդունվել են համապատասխան որոշումներ:

| ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ | ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇ | ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ՊԱՐԱԳԱՆԵՐ | ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ, ՍՏՈՒԳՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ | ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|
| Ծնողխորհրդի կապի ամրապնդում՝ դպրոցի կառավարման խորհրդի և մանկավարժական խորհրդի հետ | մ/մ նախազահ տնօրեն | Սերտ կապի ապահովում խորհրդների միջև | Հարցազրույցներ քննարկումներ | մշտադիտարկում | Ծրագրի իրականացման ընթացքում | Մարդկային ռեսուրս |
| Ծնողի և դպրոցի միջև կապերի ամրապնդման համար կազմակերպել հանդիպումներ, սեմինարներ | Տնօրեն ուսուցիչներ դասղեկներ | Սերտ կապի ապահովում խորհրդների միջև | Նախաձեռնողականություն Սահիկաշարեր պաստառներ | Դասղեկի ,ուսուցչի հաշվետվություն,ծնողխորհրդի արձանագրություն | Ծրագրի իրականացման ընթացքում | Մարդկային ռեսուրս |
| Աջակցություն ծնողական խորհրդի աշխատանքների կազմակերպանը | Դասղեկներ ուսուցիչներ | Ճիշտ կազմված արձանագրություններ | Նախաձեռնողականություն | ծնողխորհրդի արձանագրություն | Ծրագրի իրականացման ընթացքում | Մարդկային ռեսուրս |
| Կարողունակությունների զարգացում | Դասղեկներ ուսուցիչներ | ՀՊՉ-ի ամրագրված կարողունակություններով օժտված | ՏՀՏ գործիքներ ինտերնետ | Դասղեկի ,ուսուցչի հաշվետվություն,ծաշ խորհրդի արձանագրություն | Ծրագրի իրականացման ընթացքում | Մարդկային ռեսուրս |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | աշակերտ | | | | |
| Աշխորհրդին տալ լիազորություններ աշակերտի ինքնավարության միջոցով | Տնօրեն ուսուցիչներ դասղեկներ աշակերտ | Աշակերտական մասնախմբի խնդիրների բացահայտում | Քննարկումներ զրույցներ | արձանագրություններ | Ծրագրի իրականացման ընթացքում | Մարդկային ռեսուրս |
| Կազմակերպել բաց դռների օր | Տնօրեն ուսուցիչներ դասղեկներ մ/մ նախգահներ | Ծնողների ներգրավում դասապրոցեսին | դասալսումներ | արձանագրություններ | Ծրագրի իրականացման ընթացքում | Մարդկային ռեսուրս |

## 2.5 ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԸ

Դպրոցն ունի 26 մանկավարժական աշխատողներ:Բոլոր ուսուցիչներն ունեն բարձրագույն համապատասխան կրթություն: Յուրաքանչյուր տարի ուսուցիչների 1/5-ը մասնակցում է ուսուցիչների հերթական ատեստավորման նպատակով կազմակերպվող վերպատրաստմն դասընթացներին և ատեեստավորվել:Դպրոցն ունի կամավոր ատեստավորված 2 ուսուցիչ միջին շեմը հաղթահարած:

Դպրոցի ուսուցչական համակազմը համալրվում է մրցույթային կարգով՝ համաձայն ԿԳՄՍ նախարարի հրամանով սահմանված ուսուցչի թափուր տեղի մրցույթի կարգի :

Իմ գործունեության ընթացքում կադրային քաղաքականույունը կրել և կրելու է շարունակական բնույթ,մանկավարժական համակազմը պարբերաբար համալրվելու է նոր բարձրորակ կադրերով:Դասապրոցեսի կառավարման արդիականացման նպատակով ստեղծվել են յուրաքանչյուր առարկայի էլեկտրոնային ռեսուրսների պաշարներ:

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
| --- | --- |
| • Բարձրագույն կրթություն ունեցող և ատեստավորված ուսուցիչներ<br>• Մասնագիտական համապատասխան որակավորմամբ աշխատակազմ<br>• կամավոր ատեստավորված ուսուցիչներ<br>• Դասավանդման ընթացքում սովորողակենտրոն մեթոդներ և տեխնոլոգիաներ կիրառելու հմտություններին տիրապետող | • Ուսուցչի ծանրաբեռնված աշխատանք<br>• Դասարանում աշակերտների մեծ թվաքանակ<br>• Ուսուցման և գնահատման մեթոդների կիրառման հմտությունների բարելավման կարիք<br>• Ուսուցիչների ինքնագնահատման և փոխադարձ գնահատման չափանիշների վերանայում |

| | |
|---|---|
| ուսուցիչներ<br>• Վարպետության դասեր անցկացնող և սկսնակ ուսուցիչների հետ մեթոդամանկավարժական օժանդակության պատրաստակամություն դրսևորող մասնագետներ<br>• Դասի ընթացքում ՏՀՏ միջոցների և էլեկտրոնային ռեսուրսների օգտագործում<br>• Գործընկերների հետ համագործակցության և փորձի փոխանակման ձևերի հաստատված մշակույթի առկայություն, խնդիրները մասնակցային ձևաչափով լուծելու պատրաստակամություն | • Մոտիվացիայի պակաս<br>• Երիտասարդ կադրերի համալրման կարիք<br>• ՏՀՏ նոր ծրագրերի լիարժեք կիրառման հմտությունների բարելավման անհրաժեշտություն<br>• Հետազոտական աշխատանքներ կատարելու հմտությունների զարգացման կարիք Սովորողների՝ նախագծային աշխատանքներ կատարելու, առաջնորդման կարողությունների բարելավման անհրաժեշտություն<br>• Կամավոր ատեստավորման դիմելու մոտիվացիայի պակաս և մտավախություն |
| **ՆՊԱՏԱԿ** | **ԽՆԴԻՐ** |
| Կրթության բովանդակության նոր մոտեցումների և հանրակրթության նոր չափորոշչի պահանջներին համահունչ գործունեություն իրականացնող պատրաստակամ թիմի ձևավորում: | ❖ Ուսուցիչների մեթոդամանկավարժական կատարելագործման և դասավանդման հմտությունների բարելավում<br>❖ Ուսուցիչների գնահատման հմտությունների բարելավում<br>❖ ՏՀՏ միջոցների կիրառման հմտությունների բարելավում դասավանդման ընթացքում<br>❖ Ուսուցչի գործունեության գնահատման խրախուսման ձևերի բարելավում<br>❖ Ուսուցչի դերի և հեղինակության բարձրացում, փոխվստահության միջավայրի ձևավորում: |
| **ՌԻՍԿԵՐ** | **ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ** |
| • Մանկավարժական համակազմի մոտիվացիայի նվազում<br>• Ուսուցչի ցածր աշխատավարձով պայմանավորված արտահոսք | • Կազմակերպել ուսուցչի հեղինակության բարձրացմանն ուղղված միջոցառումներ (ուսուցչի մեծարում, գործունեության գնահատում, ստեղծագործող ուսուցիչների |

| | |
|---|---|
| • Ֆինանսական անբավարար միջոցներ | աշխատանքների ներկայացում, մրցույթների կազմակերպում և այլն)։<br>• Խրախուսել ուսուցիչների մասնակցությունը կամավոր ատեստավորման և ուսուցչի տարակարգին դիմելու գործընթացներին։<br>• Դպրոցի վարչատնտեսական համակարգողին ներկայացնել ուսուցիչներին դրամական խրախուսման միջոցներ տրամադրելու առաջարկներ<br>• Ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարում |

| ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ | ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇ | ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ՊԱՐԱԳԱՆԵՐ | ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ, ՍՏՈՒԳՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ | ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|
| Ուսուցման և ուսումնառության ժամանակակից մոտեցումների և տեխնոլոգիաների կիրառման հմտությունների առանձնահատկությունների վերաբերյալ սեմինարների և քննարկումների կազմակերպում: | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մեթոդմիավորման նախագահներ, հրավիրված մասնագետներ | Ուսուցման և ուսումնառության արդի մոտեցումներին իրազեկված և դրանք գործնականում կիրառելու հմտություններ ունեցող մասնագիտական թիմի առկայություն | ՏՀՏ և այլ միջոցներ | Մշտադիտարկում, ուսումնադաստիարակչական աշխատանքների, մեթոդմիավորումների նախագահների, ներքին գնահատման հաշվետվություններ | 2024-2029թթ. | Պետբյուջե |
| Հանրակրթության պետական և առարկայական նոր չափորոշիչների ներդրմամբ պայմանավորված վերապատրաստումների կազմակերպում: | Վերապատրաստող կազմակերպություններ, ԿԶՆԱԿ, Տնօրեն, տնօրենի տեղակալ, մեթոդմիավոր | ՀՊՉ նոր չափորոշիչների ներդրմամբ դասապրոցեսի արդյունավետ կազմակերպում | ԿԶՆԱԿ-ի կողմից իրականացվող վերապատրաստումներ, դպրոցի մեթոդմիավորումներ | Մշտադիտարկում, ուսումնադաստիարակչական աշխատանքների, մեթոդմիավորումների նախագահների հաշվետվություններ, դասալսումների արդյունքներ | 2024-2029թթ. | Պետբյուջե |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| արդյունքների քննարկումներ | ման նախագահներ ,վերապատրաստող /մենթոր/ ուսուցիչներ | | | | | |
| Մանկավարժական համակազմի մեթոդամանկավարժական զարգացման վերապատրաստումների կազմակերպում | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մեթոդմիավորման նախագահներ | տեխնոլոգիաների ն լիարժեք տիրապետող ուսուցիչների առկայություն | ՏՀՏ և այլ միջոցներ | Մշտադիտարկում, ուսումնադաստիարակչական աշխատանքների, մեթոդմիավորումների նախագահների հաշվետվություններ | 2024-2029թթ․ | Պետբյուջե |
| Մշտադիտարկում, ուսումնադաստիարակչական աշխատանքների, մեթոդմիավորումների նախագահների հաշվետվություննե | Տնօրեն, տնօրենի տեղակալներ, մեթոդմիավորումների նախագահներ | Գնահատման հմտությունների բարելավում | Գնահատման չափանիշների սանդղակ | Մշտադիտարկում, ուսումնադաստիարակչական աշխատանքների, մեթոդմիավորումների նախագահների հաշվետվություններ | 2024-2029թթ | Պետբյուջե |

## 2.6 ՏՀՏ, ԿՐԹԱԿԱՆ ԱՅԼ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ, ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաստատության վարչական և մանկավարժական աշխատակազմը հետևողական աշխատանքներ է տանում կրթական համակարգում տեղի ունեցող փոփոխություններին համարժեք արձագանքելու նորարարական մոտեցումների ներդրման, արդի տեխնոլոգիաներին տիրապետելու հմտություններ ձևավորելու և կիրառելու առկա ռեսուրսները արդյունավետ օգտագործելու և համալրելու ուղղությամբ: Աշակերտակենտրոն մեթոդների և հնարների կիրառումը դասավանդման ընթացքում դարձել է գերակա գործելաոճ, որը իր ազդեցություն է թողել ուսուցիչ- աշակերտ համագործակցությունը ավելի բարձր մակարդակ տեղափոխելու առումով: 21-րդ դարի կրթության հիմնական առանձնահատկություններից մեկը հաստատության կառավարման, ուսումնադաստիարակչական աշխատանքների, ինչպես նաև վարչատնտեսական գործունեության արդյունավետ կազմակերպման գործընթացներում ՏՀՏ միջոցների օգտագործման դերի կարևորումն է:

Դպրոցի գործունեությունը ավելի թափանցիկ դարձնելու նպատակով անընդհատ թարմացվում է դպրոցի կայքէջը. տեղեկատվություն տրամադրելու նպատակով օգտագործվում են նաև սոցիալական ցանցերի և այլ հարթակների հնարավորությունները: Ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը նպաստում են տարբեր կրթական կայքերի հնարավորությունները և դրանցում առկա մեթոդական-ուսումնական նյութերը, տեսաֆիլմերը, ոլորտին առնչվող նորությունները և ծրագրերը: Դրանք են՝

Kznak.am

Ktak.am

Cfep.am

http://lib .armedu .am

ihttps://www.imdproc.am/ և այլ կայքեր:

http ://esource.armedu

Dshh.am

Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման համապատասխան ծրագրերի կիրառման միջոցով են իրականացվում նաև դպրոցի ողջ փաստաթղթաշրջանառությունը, էլեկտրոնային մատենավարությունը, դասագրքերի պահանջարկի հայտագրման գործընթացները և այլն:

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| • Տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառում ուսուցման գործընթացում<br>• Ուսուցիչների կողմից ինֆորմատիկայի ուսուցչի հետ համակցված դասերի անցկացում<br>• Դպրոցի էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության առկայություն<br>• Ուսուցիչների կողմից փոխներգործուն, համագործակցային նախագծային ուսուցման մեթոդների կիրառություն<br>• Հեռավար ուսուցման կազմակերպման ծրագրերի իմացություն և օգտագործում մանկավարժական համակազմի կողմից<br>• Էլեկտրոնային հրաձգարանի առկայություն<br>• Առարկայական ծրագրերի դասավանդման էլեկտրոնային ռեսուրսների առկայություն<br>• «Արմաթ» ինժեներական լաբորատորիայի առկայություն | • Թվայնացված էլեկտրոնային գրադարանի բացակայություն<br>• Էլեկտրոնային հրաձգարանի բացակայություն<br>• Ինֆորմատիկայի կաբինետի գույքի անհրաժեշտություն<br>• Ժամանակակից համակարգիչների բացակայություն<br>• Պրոյեկտորի բացակայություն<br>• Դասարաններում համակարգիչների բացակայություն<br>• Տեղեկատվական տեխնոլոգիաների ցածր կիրառություն |
| ՆՊԱՏԱԿ | ԽՆԴԻՐ |

| | |
|---|---|
| Նորարարական մոտեցումների ներդրում, ուսուցման բարելավման նպատակով ՏՀՏ միջոցների արդյունավետ կիրառում | ❖ Ուսուցման և ուսումնառության տեխնոլոգիաների արդի ձևերի կիրառման հմտությունների բարելավում<br>❖ Ուսուցիչների տարբեր կրթական հարթակի գործիքների օգտվելու հմտությունների բարելավում |
| ՌԻՍԿԵՐ | ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
| • Ոչ բավարար ֆինանսական միջոցներ<br>• Որոշ սովորողների և ուսուցիչների անտարբերություն | • ֆինանսական լրացուցիչ միջոցների հայթայթում<br>• Խրախուսման տարբեր ձևերի կիրառում |

| ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ | ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇ | ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ՊԱՐԱԳԱՆԵՐ | ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ, ՍՏՈՒԳՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ | ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|
| Խրախուսել ուսուցիչներին՝ մասնակցելու կրթական տարբեր հարթակներում իրականացվող էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման հմտությունների բարելավմանն ուղղված դասընթացներին | Տնօրեն, տնօրենի տեղակալներ, մեթոդմիավորումների նախագահներ | Ուսուցիչների և սովորողների կարողունակությունների բարելավում | Հեռավար և առկա ուսուցման հարթակներ այլ միջոցներ | Մշտադիտարկում, | 2024-2029թթ. | Պետբյուջե |
| Ռոբոտաշինության խմբակի գործունեության ընդլայնում, պայմանների բարելավում | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մասնագիտացված աջակցությունների գծով տնօրենի տեղակալ վարչատնտեսակ | Խմբակում ընդգրկված աշակերտների աճ, մոտիվացայի բարձրացում | Խմբակի ընդլայնված տարածք. Գույք և անհրաժեշտ սարքեր | Մշտադիտարկում, ուսումնադաստիար ակչական աշխատանքների, մեթոդմիավորումների նախագահների հաշվետվություններ, դասալսումների | 2024-2029թթ. | Պետբյուջե |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ան աշխատանքների համակարգող տնտեսական գործառույթներ իրականացնող աշխատակազմ | | | արդյունքներ | | |
| Սովորողների ըստ հետաքրքրություններ ի և նախասիրությունների խմբակների ձևավորում | Տնօրեն, տնօրենի տեղակալներ, վարչատնտեսակ ան աշխատանքների համակարգող, տնտեսական գործառույթներ իրականացնող աշխատակազմ | Սովորողների նախասիրությո ւններ ին համահունչ կրթական ծառայություննե րի առկայություն | Անհրաժեշտ պայմաններ սարքավորումն եր համակարգիչնե ր և այլն | Մշտադիտարկում | 2024-2029թթ. | Պետական բյուջե |
| Սովորողների մեդիագրագիտության կարողունակություննե րի զարգացման նպատակով կազմակերպել սեմինարներ քննարկումներ: | Տնօրեն տնօրենի տեղակալներ մեթոդմիավորմա ն նախագահներ էլեկտրոնային կառավարման մասնագետ | կրթության որակի բարելավում | Համակարգիչ, տեսացուցադրո ղ սարք (պրոյեկտոր), էլեկտրոնային գրատախտակ և այլ նյութեր | Մշտադիտարկում | 2024-2029թթ. | Պետական բյուջե |

## 2.7 ՉԱՓՈՐՈՇՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԸ

Կրթության մասին ՀՀ օրենքում կրթության որակը սահմանվում է՝ որպես կրթական քաղաքականությամբ սահմանված նպատակների և խնդիրների իրագործմանը միտված կրթության կազմակերպման չափելի արդյունք: Վերջինիս գնահատման համար հաշվի են առնվում հետևյալ բաղադրիչների արդյունքները՝ համաձայն սահմանված չափանիշների:

Դրանք են՝

1. Սովորողի անհատական կարիքներ
2. Ուսուցման ծրագրային բովանդակություն
3. Կրթության կազմակերպման գործընթաց
4. Ուսումնառության գնահատված արդյունքներ
5. Կրթության կազմակերպման միջավայր

Ծրագրում կարևորվել են նաև նախագծային ուսուցմանը՝ որպես նոր չափորոշիչների կարևոր գործիքի անցում կատարելու անհրաժեշտությունը, մասնագիտական կողմնորոշման ակումբների ստեղծումը, նոր չափորոշիչների բաղադրիչ գնահատման ձևերի բազմազանության, որակական գնահատման համակարգի, հատկապես ձևավորող գնահատման ներդրումը,որը հնարավոր կդարձնի անցումը նաև կարողունակությունների ձևավորման աստիճանի գնահատմանը արժեքների և դիրքորոշումների ձևավորման տեսանկյունից :

Կարևոր ենք համարում դպրոցի զարգացման հետագա ընթացքն ապահովելու նպատակով տարբեր միջոցառումների իրականացումը, որն ավելի արդյունավետ կդարձնի որակի բարձրացման ուղղությամբ աշխատակազմի գործադրած ջանքերն ու ներդրումները: Դպրոցի տնօրենության մանկավարժական և ուսումնաօժանդակ անձնակազմի կողմից հետևողական աշխատանք է տարվել այդ բաղադրիչների ապահովման ուղղությամբ, որի շնորհիվ շատ ցուցանիշներ բարելավվել են: Դրան նպաստել են ներքին գնահատման

գործիքակազմի օգտագործումը, կաղրերի վերապատրաստման աշխատանքների կատարելագործումը, դասավանդման հմտությունների զարգացումը, վերահսկողության տարբեր ձևերի ներդրումը, ուսումնական միջավայրի նորացումը և այլն:

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| • Կրթության որակի ապահովման խոչընդոտների բացահայտման նպատակով կրթության գործընթացի մասնակիցների շրջանում հարցումների իրականացման ներդրված մշակույթ<br>• Իրավիճակի հայտորոշման նպատակով թեմատիկ և ամփոփիչ ստուգողական աշխատանքների կազմակերպում<br>• Ուսման մեջ դժվարություններ ունեցող սովորողների ընդգրկում երկարօրյա խմբերում<br>• Ներդպրոցական վերահսկողության և մշտադիտարկումների կանոնակարգված իրականացում<br>• Օժտված երեխաների համար առանձնահատուկ ծրագրերի առկայություն և այլն<br>• Դպրոցի կառավարմանը մասնակցելու փորձի առկայություն<br>• Միջդպրոցական միջոցառումների և համագործակցության առկայություն<br>• Աշակերտական գիտաժողովներին մասնակցելու պատրաստակամություն (ԿԶՆԱԿ, ԵՊՀ գործընկեր դպրոցներ և այլ)<br>• Կրթության որակի բարելավմանն ուղղված հստակ ծրագրերի և պլանավորված գործողությունների առկայություն<br>• Կարիքների գնահատման սանդղակների | • Սովորողների ստեղծագործական կարողությունները ներկայացնող դպրոցական կայքի ոչ ամբողջական պատկերը<br>• էլեկտրոնային ամսաթերթի բացակայություն<br>• Սովորողների քննադատական-վերլուծական մտածողության հետազոտական և նախագծային աշխատանք կատարելու հտություններ զարգացման կարիք<br>• Նոր չափորոշչով սահմանված՝ սովորողների կարողունակությունների զարգացման անհրաժեշտություն<br>• Գրադարանի և տարբեր էլեկտրոնային ռեսուրսներից օգտվող սովորողների ցածր տոկոս<br>• Որոշ ուսումնական տարիներին «գերազանց» առաջադիմությամբ սովորողների թվի նվազում:<br>• Գրադարանից օգտվելու ցանկություն ունեցող սովորողների մոտիվացիայի պակաս:<br>• Կախվածություն բջջային հեռախոսներից և սոցիալական ցանցերից<br>• Դասարաններում սովորողների բարձր խտություն |

| | |
|---|---|
| առկայություն<br>• Հայտորոշիչ, ձևավորող, ամփոփիչ և այլընտրանքային գնահատման ձևերի կիրառում՝ առարկայական չափորոշիչներին համապատասխան կրթության որակը գնահատելու համար<br>• Կրթության որակի ցուցանիշների արդյունքների ամփոփման հիմքի վրա վերլուծությունների առկայություն<br>• Քննադատական մտածողության կարողություններով օժտված սովորողներ<br>• Ստացած գիտելիքները գործնականում կիրառելու հմտություններ ունեցող աշակերտներ | |
| **ՆՊԱՏԱԿ** | **ԽՆԴԻՐ** |
| Հանրակրթության պետական և առարկայական չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի ապահովում | ❖ Զարգացնել գիտելիքներ ձեռքբերելու անհրաժեշտության գիտակցում և սովորելու նկատմամբ հետաքրքրություն<br>❖ Խթանել մանկավարժական համակազմի նորարական միտքն ու մոտեցումները<br>❖ Բարելավել կրթության որակի ցուցանիշները<br>❖ Բարձրացնել մշտադիտարկումների, վերլուծությունների և գնահատման կիրառման արդյունավետությունը 5. |
| **ՌԻՍԿԵՐ** | **ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ** |
| • Ուսուցիչների կողմից դասավանդման ընթացքում կառավարման վարչահրամայական ոճի կիրառում<br>• Համագործակցային մեթոդների կիրառման առանձնահատկությունների ոչ բավարար իմացություն<br>• Սովորողների և համակազմի մոտիվացիայի պակաս | • Վերապատրաստման դասընթացների կազմակերպում<br>• Համապատասխան մեթոդական նյութերի տրամադրում<br>• Խրախուսման տարբեր միջոցների կիրառում |

| ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ | ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇ | ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ՊԱՐԱԳԱՆԵՐ | ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ, ՍՏՈՒԳՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ | ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|
| Խրախուսել ուսուցիչներին՝ մասնակցելու կրթական տարբեր հարթակներում իրականացվող էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման հմտությունների բարելավմանն ուղղված դասընթացներին | Տնօրեն, տնօրենի տեղակալներ, մեթոդմիավորումների նախագահներ | Ուսուցիչների և սովորողների կարողունակությունների բարելավում | Հեռավար և առկա ուսուցման հարթակներ այլ միջոցներ | Մշտադիտարկում, | 2024-2029թթ․ | Պետբյուջե |
| Կազմակերպել դպրոցի էլեկտրոնային ամսաթերթի հրատարակման աշխատանքները, որտեղ իրենց ստեղծագործություններով հանդես կգան | Տնօրեն, տնօրենի տեղակալներ, մեթոդմիավորումների և աշակերտական խորհուրդների ղեկավարներ, | Խմբակում ընդգրկված աշակերտների աճ, մոտիվացայի բարձրացում | Համապատասխան պայմաններ և միջոցներ | Մշտադիտարկում, ներդպրոցական վերահսկողություն, ուսումնադաստիարակչական աշխատանքների, մեթոդմիավորումների, ներքին գնահատման | 2024թ․ | Պետբյուջե |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| աշակերտները, ուսուցիչները և կրթության գործընթացի մյուս մասնակիցները: | էլեկտրոնային կառավարման և դասա-վանդման ապահովման մասնագետ | | | հաշվետվություններ | | |
| Տարրական դասարանների սովորողների համար ուսումնական թիվը պլանում ներառել «Տրամաբանական խաղեր» դասընթացը | Դասղեկներ, դասվարներ | քննադատական մտածողության բարելավում | Ծրագիր, ուսումնաօժանդակ նյութեր և այլ միջոցներ | Մշտադիտարկում, ներդպրոցական վերահսկողություն, ուսումնադասատիար ակչական աշխատանքների, մեթոդմիավորումների, ներքին գնահատման հաշվետվություններ | 2024-2025 ուստարվանից | Պետբյուջե |
| Ավելացնել «Արմաթ» ինժեներական լաբորատորիայի խմբակում ընդգրկված սովորողների թիվը | Տնօրեն, համակարգող, տնօրենի տեղակալներ, մեթոդմիավորումներ, ուսուցիչներ | Սովորողների կառուցողական ունակությունների բարելավում | Ուսումնական նյութեր և այլ միջոցներ | Մշտադիտարկում, ներդպրոցական վերահսկողություն, ուսումնադասատիար ակչական աշխատանքների, մեթոդմիավորումների, ներքին գնահատման հաշվետվություններ | 2025-2026 ուստարվանից | Պետբյուջե |

## 2.8 ԲԱԶՄԱԿԱՐԾԻՔ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Դպրոցի համակազմի գործունեության ընթացքում առողջ հարմարավետ և վստահության հարաբերություններ ձևավորելու և կառավարման ժողովրդավարական ոճի կիրառման չափանիշներից է բազմակարծիք ներառական և մասնակցային արժեքային միջավայրի առկայությունը: Արդյունավետ կառավարումը ենթադրում է համակազմի յուրաքանչյուր անդամի ներդրման ձևավորված մշակույթ: Բազմակարծիք ներառական և մասնակցային արժեքային միջավայրի ձևավորման նպատակով դպրոցի բոլոր ենթակառուցվածքները ներգրավվել են նպատակների պլանավորման և իրագործման ներդպրոցական վերահսկողության իրականացման, կրթության որակի բարելավմանն ուղղված ջանքերի համախմբման գործընթացներում:

Դպրոցի կրթության գործընթացների մասնակիցների ներդրման արժևորումը և որոշումների կայացման հարցերում վերջիններիս ներգրավվածության ապահովումը տնօրենի գործունեության կարևոր մոտեցումներից է: Որոշումների կայացման մասնակցային ոճի կիրառումը նպաստել է խնդիրների լուծման նպատակով համակարգային մոտեցումներ կիրառմանը, ինչը պայմաններ է ստեղծել դպրոցի կառավարման գործընթացներին կրթության շահառուների շահագրգիռ մասնակցության և թիմային պատասխանատվության մշակույթի ձևավորման համար

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| • Բազմակարծիք ներառական և մասնակցային միջավայրի առկայություն<br>• Դպրոցի գործունեության տարբեր ոլորտների կարիքների ճշտման կայուն համակարգի առկայություն, | • Լիազոր մարմնի վարչական շրջանի անձնակազմի ներկայացուցիչների կողմից ոչ բավարար մասնակցություն քննարկումներին, կարիքների գնահատման և կարծիքներ ներկայացնելու |

| | |
|---|---|
| մասնավորապես՝<br>• Հանդիպումներ, քննարկումներ կառավարման և խորհրդակցական մարմինների ներկայացուցիչների հետ<br>• Ծնողական համալսարանի գործունեություն<br>• Հարցումների իրականացում շահառու բոլոր խմբերի շրջանում<br>• Հարցումների արդյունքների ամփոփում հրապարակայնության ապահովում (դպրոցի կայքէջ, ներքին գնահատման հաշվետվությունների կազմում և ներկայացում կրթության գործընթացի մասնակիցներին<br>• Կոնֆլիկտների հաղթահարման համագործակցային ռազմավարության առկայություն և այլն:<br>• Սովորողների սոցիալական առողջապահական շահերի և իրավունքների պաշտպանության միջավայրի առկայություն: | գործընթացներին<br>• Սովորողների շրջանում կրթական, սոցիալական և առողջապահական շահերի և իրավունքների պաշտպանության վերաբերյալ տեղեկատվության տրամադրման միջոցների և ձևերի ոչ լիարժեք օգտագործում |
| **ՆՊԱՏԱԿ** | **ԽՆԴԻՐ** |
| Բազմակարծիք ներառական և մասնակցային արժեքային միջավայրի բարելավում | ❖ Ապահովել կրթության գործընթացների մասնակիցների ակտիվ ներգրավվածությունը դպրոցի կարիքների բացահայտման և առաջարկությունների ներկայացման գործընթացներում<br>❖ Սովորողների սոցիալական, առողջապահական շահերի և իրավունքների պաշտպանության միջավայրի բարելավման միջոցառումների իրականացում |
| **ՌԻՍԿԵՐ** | **ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ** |

| | |
|---|---|
| • Համակազմի որոշ անդամների պասիվություն և անտարբերություն<br>• Փոխհամաձայնության և համատեղ որոշումներ կայացնելու մշակույթի բացակայություն | • Խրախուսել համակազմի բոլոր անդամների մասնակցությունը կառավարման գործընթացներին<br>• Կիրառել նախատեսված խրախուսման ձևերը |

| ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ | ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇ | ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ՊԱՐԱԳԱՆԵՐ | ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ, ՍՏՈՒԳՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ | ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|
| Դպրոցի կարիքների բացահայտման նպատակով հարցումների իրականացում կրթության գործընթացի մասնակիցների շրջանում | Դպրոցի տնօրենություն, մեթոդմիավորումներ | Զարգացման հետագա գործողությունների իրատեսական պլանավորում | Հարցումների իրականացման հարցաթերթիկներ | Մշտադիտարկում Ներքին գնահատման հաշվետվություններ | **2024-2029թթ** | Պետբյուջե |
| Սովորողների շրջանում կրթական, սոցիալական և առողջապահական շահերի և իրավունքների պաշտպանության վերաբերյալ տեղեկատվության տարբեր ձևերի կիրառում | Դպրոցի տնօրենություն մեթոդմիավորումներ ուսուցիչներ | կրթական սոցիալական և առողջապահական շահերի և իրավունքների պաշտպանության մշակույթի առկայություն | Համապատասխան տարածք, ՏՀՏ և այլ միջոցներ, համապատասխան մասնագետներ (հոգեբան կոնֆլիկտաբան | Մշտադիտարկում | **2024-2029թթ** | Պետբյուջե |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Ներդպրոցական վերահսկողության և մշտադիտարկումների գործիքների մշակման նպատակով քննարկումների կազմակերպում | Դպրոցի տնօրենություն մեթոդմիավորումներ, ուսուցիչներ | Աշխատակազմի պատասխանատվության բարձրացում | Քննարկումնե-րի համապատասխան տարածք, ՏՀՏ և այլ միջոցներ | Մշտադիտարկում Ներդպրոցական վերահսկողության իրականացման վերաբերյալ հաշվետվություններ | **2024-2029թթ** | Պետբյուջե |
| ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանը կազմելու նպատակով հանդիպումների, քննարկումների կազմակերպում, առաջարկություններ ի ներառում | դպրոցի տնօրենություն, մեթոդմիավորումներ, ուսուցիչներ | Աշխատակազմի պատասխանատվության բարձրացում | | Մշտադիտարկում Ներդպրոցական վերահսկողության իրականացման վերաբերյալ հաշվետվություններ | **2024-2029թթ** | Պետբյուջե |
| | | | | | | |

## *2.9ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ*

Դպրոցում ուսուցչի դերը կարևորվում է, խրախուսվում է գովեստի,ճանաչման և արժևորման միջոցով,սակայն դրամական պարգևներ չի տրվել:

Երբեմն՝ շնորհվել է շնորհալակագրեր՝ խրախուսելով անձնակազմի ձեռքբերումները, բայց ոչ նյութապես: Դպրոցում աշխատակազմի ինքնակրթության համար բավարար պայմաններ ստեղծված չեն:

Կամավոր ատեստավորման շնորհման մրցույթներում ուսուցիչները հետաքրքրություն են դրսևորում, սակայն չնչին մասը,կամավոր ատեստավորմանը մասնակցել է 2 հոգի և հաղթահարել են միջին շեմը:

Մանկավարժների ինքնակրթության համար դպրոցում անհրաժեշտ միջավայր ձևավորված չէ: Դպրոցում վերապատրաստումների արդյունավետության ստուգում չի իրականացվում և հետադարձ կապ տալու , շարունակական աջակցության տրամադրման մեխանիզմը ձևական բնույթ է կրում:

Ինքնկրթությամբ զբաղվող ուսուցիչների համար չկան անհրաժեշտ բավարար պայմաններ՝ առանձնացված հանգստի սենյակ , համակարգիչ,հարուստ գրականություն: Դպրոցն անձնակազմի անդամներին կրթական ռեսուրսներով չի ապահովում: Դպրոցը ուսուցիչների ձեռքբերումները չի հրապարակում, որը ևս խթան կհանդիսանա:

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄ |
|---|---|
| • Դպրոցում ձևավորված է առողջ բարոյահոգեբանական միջավայր<br>• Ձևավորված է համագործակցային | • Աշխատակազմի որոշ անդամների ինքնակրթության մշակված ծրագրերի բացակայություն |

| | |
|---|---|
| միջավայր:<br>• Դպրոցը գումար է տրամադրում ուսուցիչների պարտադիր ատեստավորմանը<br>• Դպրոցն օժանդակում է ԿԶՆԱԿ-ի,ԿԳՄՍՆ-ի կողմից երաշխավորված սեմինարների մանկավարժների մասնակցությունը<br>• Փորձի փոխանակման նպատակով իրականացնում է փոխադարձ դասալսումներ<br>• դպրոցն ապահովում է մասնագիտական աճի հնարավորություն ուսուցիչների համար<br>• Ուսումնական միջավայրը նպաստում է համակազմի ինքնակրթության բարելավման պահանջարկի իրացմանը<br>• հարթակներում իրականացվող վերապատրաստումներին ուսուցիչների մասնակցությունը<br>• դպրոցում պահպանված է ուսուցիչների համար դրական արժևորման մթնոլորտ<br>• Վերապատրաստումների շարունակականության ապահովում | • աշխատակազմի անդամների՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարի համապատասխան հրամանով սահմանված մասնագիտական չափանիշների և ինքնագնահատման մեխանիզմների ոչ բավարար իմացություն<br>• Ուսուցչի կամավոր ատեստավորմանը դիմելու մոտիվացիայի պակաս<br>• Ստեղծագործող և շնորհալի ուսուցիչների խրախուսման ձևերի ներդրման անհրաժեշտություն<br>• Թույլ է ուսուցիչների համագործակցությունն այլ դպրոցների հետ<br>• ֆինանսական վիճակի սղություն՝ հաջողություններ ունեցող ուսուցիչներին դրամական խրախուսման արժանացնելու համար |
| **ՆՊԱՏԱԿ** | **ԽՆԴԻՐ** |
| Մանկավարժների մասնագիտական որակների բարելավում և նրանց խրախուսման ,արժևորման ու ինքնակրթության բարձրացում | • Խրախուսման միջոցով մանկավարժների շրջանում ստեղծել առողջ մրցակցային միջավայր, ստեղծել ինքնակրթությամբ զբաղվելու համար նպաստավոր պայմաններ<br>• բարձրացնել ուսուցիչների դերը սովորողների և նրանց ծնողների շրջանում,պարզևատրել և ոգևորել բարձր ակտիվություն ցուցաբերող և անընդհատ կատարելագործվող ուսուցիչներին: |

| | |
|---|---|
| | • Ուսուցչի գործունեության գնահատման խրախուսման մեխանիզմների և ձևերի բարելավում<br>• ուսուցչի դերի և հեղինակության բարձրացում |
| ՌԻՍԿԵՐ | ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
| • Մանկավարժական համակազմի մոտիվացիայի նվազում<br>• ֆինանսական անբավարար միջոցներ | • Խրախուսել ուսուցիչների մասնակցությունը կամավոր ատեստավորման և ուսուցչի տարակարգին դիմելու գործընթացներին:<br>• Դպրոցի վարչատնտեսական համակարգողին ներկայացնել ուսուցիչներին դրամական խրախուսման միջոցներ տրամադրելու առաջարկներ:<br>• Ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարում |

| ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ | ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇ | ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ՊԱՐԱԳԱՆԵՐ | ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ, ՍՏՈՒԳՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ | ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|
| մանկավարժական համակազմի մեթոդամանկավարժական զարգացման վերապատրաստումների կազմակերպում | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մեթոդմիավորման նախագահներ | Նոր մոտեցումներին և տեխնոլոգիաների ն լիարժեք տիրապետող ուսուցիչների առկայություն | Դասընթացավարներ, ՏՀՏ և այլ միջոցներ | Մշտադիտարկում հաշվետվություններ | յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում | Պետբյուջե |
| Հանրակրթության պետական և առարկայական նոր չափորոշիչների ներդրմամբ պայմանավորված վերապատրաստումների կազմակերպում: Արդյունքների քննարկումներ: | Վերապատրաստող կազմակերպություններ, ԿԶՆԱԿ, Տնօրեն, տնօրենի տեղակալ, մեթոդմիավորման նախագահներ | ՀՊՉ նոր չափորոշիչների ներդրմամբ դասապրոցեսի արդյունավետ կազմակերպում | ԿԶՆԱԿ-ի կողմից իրականացվող վերապատրաստումներ, դպրոցի մեթոդմիավորումներ | Մշտադիտարկում հաշվետվություններ | յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում | պետբյուջե |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Իրականացնել ձևավորող գնահատման արդյունավետության գնահատում | Տնօրեն, տնօրենի տեղակալներ, մեթոդմիավորումների նախագահներ | գնահատման հմտությունների բարելավում | Գնահատման չափանիշների սանդղակ | Մշտադիտարկում | յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում | պետբյուջե |
| գնահատման տարբեր ձևերին համապատասխան գործիքների մշակում և կիրառում | Մեթոդմիավորումներ, ուսուցիչներ | Գնահատման հավաստիության սկզբունքի ապահովում Կազմակերպել առնվազն 1 սեմինար-քննարկում, համատեղ մշակել գնահատմա գործիքներ և կիրառել գործնականում | Մշակված հարցաթերթիկներ, գնահատման ռուբրիկներ և այլն | Մշտադիտարկում հաշվետվություններ | յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում | Պետբյուջե |
| Կազմակերպել «Տարվա լավագույն ուսուցիչ», «Տարվա լավագույն դասղեկ/դասվար», «Տարվա լավագույն մեթոդմիավորման նախագահ» և այլ | Տնօրեն, տնօրենի տեղակալներ, մեթոդմիավորումների նախագահներ | Խրախուսման ձևերի ուսուցիչների մոտիվացիայի բարձրացման ներդրված ձևերի առկայություն | Գնահատման հարցումներ իրականացնելու նյութեր, հարցաթերթիկներ, գնահատման սանդղակներ, հաշվետվություն | Մշտադիտարկում հաշվետվություններ | յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում | Պետբյուջե |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| անվանակարգերի մրցույթներ: | | | ներ | | | |
| Կազմակերպել ուսուցիչների մեծարման միջոցառումներ՝ կիրառելով խրախուսանքի տարբեր միջոցներ | Տնօրեն, վարչատնտեսական համակարգող, տնօրենի տեղակալներ մեթոդմիավորումներ | Ուսուցիչների մոտիվացիայի աճ | Համապատասխան նյութեր, ՏՀՏ միջոցներ | Մշտադիտարկում հաշվետվություններ | յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում | Պետբյուջե |
| Խրախուսել ուսուցիչների մասնակցությունը ԿԶՆԱԿ-ի կողմից իրականացվող տարբեր ծրագրերին, ավելացնել վերապատրաստող (մենթոր) և տարակարգ ունեցող ուսուցիչներ թիվը: | Տնօրեն, տնօրենի տեղակալներ, մեթոդմիավորումների նախագահներ ,գործընկեր դպրոցներ | Կրթության որակի բարելավում | Վերապատրաստման առկա և հեռավար դասընթացներ, հետազոտական աշխատանքները գնահատելու սանդղակնե | Մշտադիտարկում հաշվետվություններ | յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում | Պետբյուջե |

## 2.10 ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Դպրոցի միջոցները հիմնականում գոյացել են պետական բյուջեով ըստ աշակերտների թվի ֆինանսավորման պայմաններում: Ֆինանսական տարվա ընթացքում միջոցների արդյունավետ օգտագործման արդյունքում միշտ էլ ունեցել ենք որոշակի խնայողություններ: Այն օգտագործվել է դպրոցի որոշակի կարիքների համար`ընթացիկ վերանորոգումներ, գույքի ձեռքբերում, խրախուսման նպատակով տրամադրվող միջոցներ և այլն: Կարծում եմ, որ ֆինանսավորման նոր ձևի անցման պայմաններում ավելի շահեկան իրավիճակ կստեղծվի դպրոցի ֆինանսական կառավարման տեսանկյունից: Վերջին երկու տարվա ընթացքում ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով դպրոցում իրականացվել են ուսուցիչների հերթական ատեստավորման վերապատրաստման դասընթացներ՝ դարձյալ պետբյուջեի տրամադրած գումարների հաշվին: Լրացուցիչ այլ ֆինանսավորում դպրոցը չի ունեցել: Առաջիկայում նախատեսում ենք վճարովի կրթական տարբեր ծառայությունների մատուցում, որը կնպաստի ֆինանսական վիճակի բարելավմանը: Ստորև ներկայացված ֆինանսական միջոցների բաշխման ուղղությունները՝ ըստ ֆինանսական տարիների

| **Ուժեղ կողմ** | **Թույլ կողմ** |
|---|---|
| Հաստատության պետական բյուջեն բավարարում է աշխատակիցների աշխատավարձը ժամանակին վճարելու համար | Ուսուցիչների աշխատավարձի դրույքաչափը ցածր է |
| Էներգետիկ ծառայությունները կազմակերպվում են պատշաճ կերպով | Տրանսպորտային փոխհատուցում չի տրվում սպասարկող անձնակազմին |
| Հաշվապահական հաշվառումը իրականացվում է« ՀԾ» ի համակարգի միջոցով | ՀԾ ծրագրի տարեկան վճարը բարձր է |
| Աշխատակազմի մասնագիտական վերապատրաստման նպատակով ամեն տարի նախատեսվում է որոշակի գումար, | |

| | |
|---|---|
| աշխատակիցների 20%ը հաշվի առնելով | |
| բոլոր տեսակի գործարքները կատարվում են ՏՀՏ միջոցով | Չկան հովանավորչական ծրագրեր |
| Շենք-շինությունների ընթացիկ նորոգումների, պահպանման վերակառուցման նպատակով կատարվում են նպատակային ծախսեր | Ճաշարանի տաք սնունդ պատրաստող խոհարարների աշխատավարձը չի համապատասխանում իրենց կատարած աշխատանքի ծանրությանը |
| Բյուջեից տրամադրվում է բավարար գումար ՏՀՏ սարքերի պահպանման և նորոգման համար | Համակարգչային սարքավորումերիի արժեքը թույլ չի տալիս լավ սարք գնել, իսկ ցածր արժեք ունեցող սարքը շուտ շարքից դուրս է գալիս |
| Գրենական պիտույքի ,պատվերով տպագրվող նյութերի, գեղարվեստական գրքերի ձեռք բերման համար տրամադրվում է բավարար գումար | Ծնողների կողմից բավարար ներդրումներ չեն կատարվում |
| Տարեկան նախահաշվով բավարար գումար է նախատեսվել և ի կատար են ածվել կապիտալ վերակառուցման և վերանորոգման աշխատանքներ | Բյուջեն չի բավարարում ամեն տարի մեծ ծավալով շինարարական աշխատանքներ կատարելու համար |
| դպրոցական կայքում հրապարակվում են դպրոցի նախահաշիվը, ֆինանսական (ծախսերի) հաշվետվությունները, | |
| **ՆՊԱՏԱԿ** | **ԽՆԴԻՐ** |
| • Ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործում և պլանավորում,<br>• Ֆինանսական այլընտրանքային միջոցների հոսքի ապահովում դեպի դպրոցաշինություն և կրթություն | • Տանել հետևողական աշխատանք արտաբյուջետային միջոցները ձևավորող ծրագրեր իրականացնելու համար:<br>• Մասնակցել կրթական ծրագրերի, որոնք ապահովում են ֆինանսական արդյունք |

| ՌԻՍԿԵՐԸ | ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|
| • Հովանավորների , ոչ պետական ֆինանսական ծրագրեր դպրոց մուտք բերող կազմակերպությունների հետ համագործակցության պակաս ,<br>• Ֆորս մաժորային իրավիճակներ | • Ծրագրերի մասին քննարկումներ դպրոցում, համայնքում, համացանցում<br>• Առկա բյուջետային հատկացումների արդյունավետ կառավարում |

| ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ | ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇ | ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ՊԱՐԱԳԱՆԵՐ | ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ, ՍՏՈՒԳՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ | ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|
| Դրամաշնորհային ծրագրերի իրականացում | Տնօրեն, տեղակալներ, մեթոդմիավորման նախագահներ | Ֆինանսական միջոցների բարելավում | | Մշտադիտարկում Ներքին գնահատման հաշվետվություններ | Ուստարվա ընթացքում | |
| Վճարովի կրթական ծառայությունների կազմակերպում | Տնօրեն, վարչատնտեսական համակարգող | Ֆինանսական միջոցների բարելավում | Աշխատակազմ | Մշտադիտարկում Ներքին գնահատման հաշվետվություններ | Ուստարվա ընթացքում | |
| Մասնակցել կրթական ծրագրերի մրցույթների, որոնք ունեն ֆինանսական դրամաշնորհնե | Տնօրեն, վարչատնտեսական համակարգող | Ֆինանսական միջոցների բարելավում | ծրագրեր, նախագծեր | Մշտադիտարկում Ներքին գնահատման հաշվետվություններ | ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում | |
| Գտնել բարերարներ և հովանավորներ | Տնօրեն, վարչատնտեսական համակարգող | Ֆինանսական միջոցների բարելավում | | Մշտադիտարկում Ներքին գնահատման հաշվետվություններ | | |

# 3.ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Զարգացման ծրագիրը գնահատելիս հաշվի է առնվում՝

1. համապատասխան աշխատանքներ կատարողներն աշխատանքի կատարման ընթացքում որքանով են պահպանել նորմատիվ իրավական ակտերի պահանջները
2. որքանով է բարելավվել դպրոցի շենքային պայմաններն ու հարստացել նյութատեխնիկական բազան
3. որքանով է բարձրացվել ուսումնադաստիարակչական աշխատանքների որակը ,
4. որքան մոտիվացնող ու հարմարավետ է դարձել կրթական միջավայրը
5. հաստատության կառավարման ու ղեկավարմանգործում որքանով են մասնակից լինում ուսուցիչները,ծնողները,խորհուրդներն ու այլ շահագրգիռ անձինք ու կազմակերպությունները
6. որքանով է կրթական միջավայրն անվտանգ սովորողների և աշխատողների համար
7. մանկավարժների խրախուսման ինչ արդյունավետ միջոցներ են կիրառվել

## ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹ

| № | Միջոցառում/ գործողություն | Ակնկալվող արդյունք | Սահմանված ժամկետ | Կատարված աշխատանքի նկարագրություն | Սահմանված ժամկետում միջոցառման/ գործողության չկատարման կամ մասնակի կատարման (առկայության դեպքում) պատճառները | Զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկություններ | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | | | | | | | |
| 2. | | | | | | | |
| 3. | | | | | | | |
| … | | | | | | | |